## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 օգոստոսի 2024թ. թիվ 576-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի 26.08.2024թ. զեկուցագիրը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 27.05.2024թ. թիվ 771-Ն որոշմամբ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված գումարներից 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների հետևանքով տեղի ունեցած հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակով պայմանավորված բնակիչների սոցիալական խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու ընթացքում առաջացած ծախսերը փոխհատուցելու նպատակով աղետից տուժած քառասունվեց քաղաքացու հատկացնել 2290000 /երկու միլիոն երկու հարյուր իննսուն հազար/ դրամ միանվագ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հնգօրյա ժամկետում հատկացնել գումարը:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. օգոստոսի 27
ք.Վանաձոր